ՅԱՌԱՋԱԲԱՆ

Առաջին պրակն է սոյն տետրակը Նիւթեր եւ Ուսումնասիրութիւններ վերնագրով շարքի, որ հետզհետէ պէտք է լոյս տեսնեն Երուսաղէմի Ս. Յակոբեանց Աթոռի տպարանից, նախ յօդուածներով Սիոնի մէջ եւ ապա առանձին գրքոյկներով, իբրև փոքրիկ, բայց ամբողջական բնոյթ կրող ուսումնասիրութիւնների ժողովածուներ, նուիրուած հայ Արուեստի եւ Մշակոյթի պատմութեան խնդիրներին։

Այդ դաշտը մեզանում դեռ եւս նոր է սկսում մշակութեան ենթարկուել եւ հնարաւոր չէ առանց նախապատրաստական աշխատանքների նորա ծագման եւ զարգացման պատմութեան ամբողջական նկարագրութիւն տալ. այս փոքրիկ յօդուածներն ու մենագրութիւնները մի տեսակ նախապատրաստութիւն պիտի համարել ապագայի աւելի մեծ գործի համար։ Ամբողջական բնոյթ կրող աշխատանքի մէջ դժուար է ամեն անգամ շեղուել, մութ խնդիրները լուսաբանելու համար, առանց ենթարկուելու խճողման վտանգին, սորա նպատակն է մասամբ և խուսափել այդպիսի վտանգներից։

Այս պրակների մէջ կը զետեղուին ճարտարապետութեան եւ մանրանկարչութեան, մանր արուեստների՝ ոսկերչութեան, ասեղնեգործութեան, փայտի քանդակագործութեան, յախճապակեղէնների վերաբերեալ նիւթերի հրատարակութիւններ և ուսումնասիրութիւններ, ինչպէս և պատմական–մատենագրական, որոնք ապագայ շէնքի ամբողջութեան առաղձ կարող են ծառայել։ Կ'աշխատենք ըստ հնարաւորութեան իւրաքանչիւր պրակի մէջ ամփոփել միատեսակ նիւթեր, որպէս զի նրանք փոքրիկ ամբողջութիւններ կազմեն մի կամ մի քանի յօդուածներից բաղկացած, որով ոչ միայն հեղինակին դիւրութիւն կ'ընծայուի իւր ապագայ աշխատանքների համար, այլ և բանասէրներին առ հասարակ, որոնց համար հեշտ չէ շատ անգամ հանդէսների մէջ ցրուած յօդուածները գտնել եւ հարկաւոր ժամանակ օգտագործել։

Յատուկ շնորհակալութեան արժանի է Սիոնի պատուարժան Խմբագրութիւնը, որ հնարաւորութիւն է տալիս այսպիսի պրակներ կազմել, կանգ չառնելով նիւթական և բարոյական զոհողութեան առաջ։

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊՍ. ՅՈՎՍԷՓԵԱՆՑ
Միաբան Ս. Էջմիածնի

Երուսաղէմ
10 Նոյեմբ. 1935